ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

21 փետրվարի 2022թ.

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ նաև ԿՏՄ), առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներով, ստուգումներն իրականացնում է ստուգաթերթերով, որոնք ներառում են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների սպառիչ ցանկը՝ համապատասխան կշռային միավորներով: Սակայն, միայն օրենսդրության պահանջների խախտումների արձանագրումը և ստուգաթերթերի կիրառմամբ ռիսկայնության գնահատումը հնարավորություն չեն տալիս ամբողջական պատկերացում կազմել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ոլորտներում կրթության որակի և առկա խնդիրների մասին: Մինչդեռ, ԿՏՄ-ի նպատակը ոչ միայն կրթության բնագավառի օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է, այլև՝ կրթության որակի բարձրացումը և աջակցումը կրթական ծրագրերի յուրացման ապահովմանը: Այդ հիմնավորումով էլ 2021 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում

իրականացվող ստուգումների շրջանակում ԿՏՄ-ն սկսեց կիրառել նախապես մշակված՝ կրթության որակի գնահատման գործիքակազմը (այսուհետև՝ ձևաթղթեր):

Համաձայն 2021 թվականի գործունեության ծրագրի և ԿՏՄ-ի ղեկավարի համապատասխան հրամանների՝ ձևաթղթերը փորձարարական նպատակով կիրառվել են ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող (այսուհետ՝ նախնական և միջին մասնագիտական) հետևյալ հաստատություններում՝ «Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ-ում, ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի պետական բժշկական քոլեջ», «Չարենցավանի պետական քոլեջ», «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ներում, □Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան□, □Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարան□, □Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարան□ ՊՈԱԿ-ներում:

Նախնական և միջին մասնագիտական հաստատություններում մասնագիտության կրթական գործընթացի որակի գնահատումն իրականացվել է համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի, որը բաղկացած է □Տնօրեն□, «Ուսանողի հարցաթերթ», □Գործընկեր կազմակերպություններ (Գործատու)□ հավելվածներից:

Կրթության որակի գնահատման ձևաթղթի վերլուծության արդյունքում վեր հանված խնդիրները, որոնք կարող են ազդել նախնական և միջին մասնագիտական հաստատություններում մրցունակ մասնագետների պատրաստման որակի վրա, հիմնականում վերաբերում են՝ ուսանողների գործնական

կարողությունների ու հմտությունների կատարելագործմանը, կրթական ծրագրերում գործնական ժամերի ավելացմանը, պրակտիկաների արդյունավետության բարձրացմանը, ռեսուրսների համալրմանը,իրազեկվածության բարձրացմանը և այլն:

Ստորև ներկայացված են գնահատման արդյունքներն՝ ըստ յուրաքանչյուր հավելվածի:

Արդյունքներն՝ ըստ հավելվածների

Ձևաթղթի □Տնօրեն□, «Ուսանողի հարցաթերթ», □Գործընկեր կազմակերպություններ (Գործատու)□ հավելվածներում մասնագիտության կրթական գործընթացի որակի գնահատման նպատակով թիրախավորվել են հետևյալ 3մասնագիտությունները.

- Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական, Կապանի պետական բժշկական քոլեջներում՝ **«Ատամնատեխնիկական գործ»,**
- Երևանի ինֆորմատիկայի, Չարենցավանի պետական քոլեջներում՝ **«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»,**
- Գյումրու հ. 1, Երևանի հհ 6, 4 արհեստագործական պետական ուսումնարաններում՝ **«Խոհարարական գործ»:**

Հավելված 1.□Տնօրեն□

□Տնօրեն□ հավելվածը բաղկացած է կրթական գործընթացին վերաբերող տարբեր բնութագրիչներից և դրանց համապատասխան գնահատման չափանիշներից: Բնութագրիչների գնահատման արդյունքը հաշվարկված ցուցանիշ է,որը կարող է արտահայտվել որպես □Բարձր արդյունք□, □Միջին արդյունք□ և □Ցածր արդյունք□: Բնութագրիչների գնահատումն իրականացվել է նախորդող 3ուսումնական տարիների տեղեկատվության (թվային տվյալների) հիման վրա: Համաձայն □Տնօրեն□

հավելվածի՝ ստուգված հաստատություններում առկա է հետևյալ պատկերը.

1. Ուսանողների ընդհանուր թիվը ուստարվաավարտին (պետական ամփոփիչ ստուգումից առաջ)՝ ըստ 3 ուսումնական տարիների, չորս հաստատություններում նախաճել է,ապանվազել կամ՝ հակառակը (□Միջին արդյունք□) (Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ,Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան, Երևանի հհ. 6,4 արհեստագործական պետական ուսումնարաններ), 3 հաստատություններում գրանցվել է □Բարձր արդյունք□ (Երևանի ինֆորմատիկայի և Կապանի պետական բժշկական, Չարենցավանի պետական քոլեջներ)՝ պայմանավորված՝ ըստ հաջորդական ուսումնական տարիների ուսանողների թվի աճով:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆ ԸՍՏ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻԻ ԳԾԱՊԱՏԿԵՐ 1



2. **Գծապատկեր 1-ում** ներկայացված թիրախավորված երեք մասնագիտություններից, երեք ուսումնական տարիներին, **«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությունն ընտրած** ուսանողների թիվն աճել է, իսկ **«Խոհարարական գործ»** մասնագիտությունն ընտրած ուսանողների թիվը **և՛ նվազել է, և՛ աճել**: Անհամեմատմեծ թիվ է կազմում Երևանի ինֆորմատիկայի քոլեջի **«Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»** մասնագիտությունն ընտրած ուսանողների թիվը:

2017-2018, 2018-2019, 2019-2020 ուսումնական տարիներին վերոնշյալ 3 մասնագիտություններով ավարտական կուրսում բարձր առաջադիմությամբ ուսանողների թիվը Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում, Գյումրու հ. 1 և Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարաններում կազմել է հիմնականում 50%-ից բարձր, իսկ Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում, Երևանի ինֆորմատիկայի պետական, Կապանի պետական բժշկական, Չարենցավանի պետական քոլեջներում՝ առկա են ուսանողների առաջադիմության 50%-ից ցածր արդյունքներ: Մանրամասն ցուցանիշները ներկայացված են **գծապատկեր 2-ում.**

ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԹԻՎՆ ԸՍՏ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ
ԳԾԱՊԱՏԿԵՐ 2



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, ավարտական կուրսիուսանողների առաջադիմությունը ընդհանուր առմամբ **և՛ նվազել է, և՛ աճել:**

Բարձր առաջադիմությամբ սովորողների քանակական դինամիկան Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում և Չարենցավանի պետական քոլեջում գրանցել է □Բարձր արդյունք□ (պայմանավորված է երեք ուստարիների կտրվածքով բարձր առաջադիմություն ունեցող սովորողների տոկոսային թվի աճով), իսկ մյուս 4 հաստատություններում՝ □Միջին արդյունք□ (պայմանավորված է երեք ուստարիների կտրվածքով բարձր առաջադիմություն ունեցող սովորողների տոկոսային թվի՝ սկզբում աճով, ապա՝ նվազմամբ կամ հակառակը):

«**Խոհարարական գործ**» մասնագիտությամբ սովորողների առաջադիմությունը Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում ընդհանուր առմամբ ավելի բարձր է (բացառությամբ 2018-2019 ուս. տարվա), քան Երևանի հհ. 4, 6 արհեստագործական պետական ուսումնարաններում:

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ սովորողների առաջադիմությունը **Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում** երեք ուստարիներին ավելի բարձր է (57%,71%,50%), քան Կապանի պետական բժշկական քոլեջում (0%,43%,40%):

3.Պրակտիկայի գնահատման արդյունքում բարձր առաջադիմությամբ ուսանողների թիվը տոկոսային արտահայտությամբ երեք ուսումնական տարիներին համապատասխանաբար կազմել է՝ **Գյումրու հ. 1** արհեստագործական պետական ուսումնարանում՝ 94%, 98%՝ գրանցելով □Բարձր արդյունք□,իսկ 2019-2020 ուստարում՝

0%՝ □Ցածր արդյունք□, **Երևանի հ. 6 ա**ռհեստագործական պետական ուսումնարանում՝ 34%, 46%, 46% գրանցելով □Միջին արդյունք□, **Երևանի հ. 4** արհեստագործական պետական ուսումնարանում՝ 25%, 18%, 21%՝ □Միջին արդյունք□, **Երևանի ինֆորմատիկայի պետական** քոլեջում՝ 9%, 5%, 13%՝ □Միջին արդյունք□, **Կապանի պետական բժշկական քոլեջում՝** 27%, 39%, 44%՝ □Միջին արդյունք□,**Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝** 57%, 71%, 50%՝ □Բարձր արդյունք□, **Չարենցավանի պետական քոլեջում՝** 3%, 12%, 14%՝ □ Բարձր արդյունք□:

Վերոնշյալ բարձր արդյունքը պայմանավորված է երեք ուսումնական տարիներին պրակտիկայի արդյունքում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների թվի աճի դինամիկայով, քանի որ, ըստ ուստարիների, այդ ուսանողների թիվն (նաև՝ տոկոսային)աճել է:



4. Պրակտիկայի արդյունքում նշված մասնագիտություններով բարձր առաջադիմություն ունեցող սովորողների քանակական դինամիկան Գյումրու հ. 1, Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարաններում և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում գրանցել է՝ □Միջին արդյունք□ (պայմանավորված է երեք ուստարիների կտրվածքով պրակտիկայի արդյունքում բարձր առաջադիմություն ունեցող սովորողների տոկոսային թվի՝ սկզբում

աճով, ապա նվազմամբ կամ հակառակը), իսկ Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում, Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական, Կապանի պետական բժշկական և Չարենցավանի պետական քոլեջներում՝ □Բարձր արդյունք □(պայմանավորված է երեք ուստարիների կտրվածքով պրակտիկայի արդյունքում բարձր առաջադիմություն ունեցող սովորողների տոկոսային թվի աճով):

5. **Պետական ամփոփիչ ստուգումներից** բարձր առաջադիմություն ցուցաբերած տվյալ մասնագիտության **ուսանողների թիվը** վերջին երեք ուսումնական տարիներին համապատասխանաբար կազմել է՝ **Գյումրու հ. 1** արհեստագործական պետական ուսումնարանում՝ 81%, 92%, 100%՝ գրանցելով □Բարձր արդյունք □, **Երևանի հ. 6 ա**րհեստագործական պետական ուսումնարանում՝ 97%, 95%, 100% գրանցելով □Բարձր արդյունք □, **Երևանի հ.4** արհեստագործական պետական ուսումնարանում՝ 35%, 28%, 30%՝ □Միջին արդյունք □, **Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի** անվան բժշկական քոլեջում՝ 43%, 21%, 33%՝ □Միջին արդյունք □, **Երևանի ինֆորմատիկայի պետական** քոլեջում՝ 32%,34%,62%՝ □Միջին արդյունք □,**Կապանի պետական բժշկական քոլեջում՝** 27%, 39%, 44%՝ □Բարձր արդյունք □, **Չարենցավանի պետական քոլեջում՝** 0%, 2%, 9%՝ տոկոսային արտահայտությամբ փոքր է եղել 20%-ից և հետևաբար գրանցվել է □ Ցածր արդյունք □:



6. Պետական ամփոփիչ ստուգումներից բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների քանակական դինամիկան Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում Չարենցավանի պետական քոլեջում գրանցել է «Բարձր արդյունք», քանի որ 2017-2018, 2018-2019, 2019-2020 ուսումնական տարիներին տվյալ մասնագիտությամբ պետական ամփոփիչ ստուգումներից բարձր առաջադիմություն ունեցող սովորողների տոկոսային թիվն աճել է: Երևանի հհ. 4, 6 արհեստագործական պետական ուսումնարաններում, Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում, Երևանի

ինֆորմատիկայի, Կապանի պետական քոլեջներում պետական ամփոփիչ ստուգումներից բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների քանակական դինամիկան գրանցել է՝ □Միջին արդյունք□՝ կախված երեք ուսումնական տարիներին բարձր առաջադիմություն ունեցող սովորողների տոկոսային թվի հաջորդաբար աճից, ապա՝ նվազումից կամ՝ հակառակը:



7. Չնայած առաջադիմության բարձր ցուցանիշների առկայությանը՝ նշված մասնագիտություններով գերազանցության դիպլոմով շրջանավարտներ չեն եղել Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում, Կապանի պետական բժշկական, Չարենցավանի պետական քոլեջներում,Գյումրու հ. 1և

Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարաններում գրանցվել է □Ցածր արդյունք□, իսկ Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ □Միջին արդյունք□, որոնց քանակական ցուցանիշները ներկայացված են **աղյուսակ 1-ում**.

Աղյուսակ 1

Աղյուսակ 1.Գերազանցության դիպլոմով ավարտած շրջանավարտների թիվն՝ ըստ ուսումնական տարիների և հաստատությունների				
Ուս. տարիներ	**Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան**	**Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարան**	**Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ**	**Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ**
2017-2018	**1**	**1**	**0**	**7**
2018-2019	**2**	**0**	**3**	**4**
2019-2020	**0**	**0**	**1**	**13**

8. Ուսումը ԲՈՒՀ-ում շարունակելու համար երաշխավորված՝ տվյալ մասնագիտության ուսանողներ եղել են Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում, իսկ մնացած վեց հաստատություններում չեն եղել:

9. Տվյալ մասնագիտությունից այլ մասնագիտություն ընտրած ուսանողներ եղել են միայն Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում,ինչը գնահատվել է որպես «Ցածր արդյունք»: Մյուս հաստատություններում չեն եղել այլ մասնագիտություն ընտրած ուսանողներ, ինչը գրանցվել է որպես «Բարձր արդյունք»:

10. Այլ մասնագիտություններից տվյալ մասնագիտությունն ընտրած ուսանողների քանակական տվյալներն ու արդյունքները,ըստերեք ուսումնական տարիների,ներկայացված է ստորև բերված աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

Հաստատությունը	2017-2018	2018-2019	2019-2020	2020-2021	Արդյունքը
	Ուսանողների թիվը	Ուսանողների թիվը	Ուսանողների թիվը	Ուսանողների թիվը	
Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան	2	0	0		Միջին
Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ	4	7	2		Միջին
Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարան		2	0	0	Միջին
Չարենցավանի պետական քոլեջ		2	0	2	Միջին

Մյուս երեք հաստատությունները՝ Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանը, Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջը, Կապանի բժշկական քոլեջը, չեն ունեցել այդպիսի ուսանողներ, հետևաբար գրանցվել է □Ցածր արդյունք□:

11. Նշված մասնագիտություններով մասնագիտական առարկաների՝ համապատասխան որակավորումչունեցող դասախոսներ, բացի Չարենցավանի պետական քոլեջից, մնացած 6 հաստատություններում չեն եղել, ավելին՝ Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության բոլոր 10 մանկավարժական աշխատողներն ունեցել են գիտական կոչում (գիտական աստիճան),ինչը գնահատվել է՝ □Բարձր արդյունք□:

12. Վերջին հինգ տարում նշված մասնագիտություններով **մասնագիտական**

առարկաներից վերապատրաստված մանկավարժների թիվն Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում կազմել է՝ 70 %, Կապանի բժշկական քոլեջում և Երևանի հ.4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 100%՝ գրանցելով □Բարձր արդյունք□, Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում և Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում՝ □Միջին արդյունք□՝ կազմելով համապատասխանաբար՝ 40% և 50 %, իսկ Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 40%-ից ցածր՝ 33,3 %, Չարենցավանի պետական քոլեջում՝ 11%, գրանցելով □Ցածր արդյունք□:

13. Վերջին հինգ տարում նշված մասնագիտություններով մասնագիտական առարկաներից վերապատրաստվել են **արտադրական ուսուցման** բոլոր վարպետները՝ «Բարձր արդյունք»՝ հինգ հաստատություններում: **Երևանի ինֆորմատիկայի պետական և Կապանի պետական** բժշկական քոլեջներում արտադրական ուսուցում չի իրականացվում:

14. Լրացուցիչ կրթական ծրագրեր (կարճաժամկետ վերապատրաստումներ) իրականացրել են Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանը (միայն 2017-2018 ուս. տարի) և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը (2017-2018, 2018-2019 ուս.տարիներ)՝ գրանցելով «Միջին արդյունք», իսկ մյուս հաստատություններում՝ չի իրականացվել, հետևաբար գրանցվել է □Ցածր արդյունք□:

15. Հաստատությունների կողմից նշված մասնագիտության գծով ներգրավված սոցիալական գործընկերների (գործատուների) ընդհանուր թիվը երեք ուսումնական տարիներին Գյումրու հ. 1, Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում,

Երևանի ինֆորմատիկայի, Կապանի պետական բժշկական և Չարենցավանի պետական քոլեջներում հաջորդաբար աճել է, որը գնահատվել է որպես «Բարձր արդյունք», Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարանում սկզբում նվազել է, ապա՝ աճել («Միջին արդյունք»), իսկ Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ մնացել է նույնը («Միջին արդյունք»):

16. Այնսոցիալական գործընկերների թիվը, որոնք իրենց մոտ աշխատանքի են ընդունել տվյալ հաստատությունների՝ նշված մասնագիտությամբ շրջանավարտներին, երեք ուսումնական տարիներին Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում աճել է («Բարձր արդյունք»), Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ նվազել, ապա աճել, իսկ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում, Կապանի պետական բժշկական և Չարենցավանի պետական քոլեջներում, Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ նվազել է (□Ցածր արդյունք□): Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջը «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության շրջանակում սոցիալական գործընկերներ չունի, քանի որ ունի լաբորատորիա, որն ապահովված է բոլոր հնարավոր պայմաններով, այնուհանդերձ ապահովում է նաև որոշակի համագործակցություն տարբեր կազմակերպությունների հետ:

17. Տվյալ մասնագիտության այն շրջանավարտների թիվը, որոնք տեղավորվել են աշխատանքի իրենց ուսումնառած մասնագիտությամբ՝ վերջին 3 տարվա ընթացքում՝

Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում աճել է՝ համապատասխանաբար՝ 21%, 78%, 81%՝ գրանցելով «Բարձր արդյունք»,

Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 66%, 38%, 65%,

Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ 14%, 0%, 8%,

Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 78%, 78%, 74%,

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ 21%, 11%, 15%, ընդհանուր առմամբ չի նվազել՝ գրանցելով «Միջին արդյունք»,

Կապանի պետական բժշկական և Չարենցավանի պետական քոլեջներում՝ ընդհանուր առմամբ նվազել է՝ գրանցելով □Ցածր արդյունք»:

18. Տվյալ մասնագիտության այն շրջանավարտների թիվը, որոնք տեղավորվել են աշխատանքի իրենց ուսումնառած մասնագիտությամբ և սոցիալական գործընկերների (գործատուների) միջնորդությամբ՝

Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում աճել է՝ համապատասխանաբար՝ 7%, 26%, 35%՝ գրանցելով «Բարձր արդյունք»,

Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 8%, 8%, 10%,

Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ 14%, 0%, 8%,

Երևանի հ.4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 17%, 28%, 17%,

Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ 2%, 1%, 1%, ընդհանուր առմամբ չի նվազել՝ գրանցելով «Միջին արդյունք»,

Կապանի պետական բժշկական և Չարենցավանի պետական քոլեջներում՝ ընդհանուր առմամբ նվազել է՝ գրանցելով □Ցածր արդյունք»:

19. Վերջին երեք տարվա ընթացքում տվյալ մասնագիտության շրջանավարտների այլ մասնագիտությամբ աշխատանքի տեղավորված շրջանավարտների թիվն՝ աճել է Կապանի պետական բժշկական քոլեջում՝ 0%, 29%, 20%, Չարենցավանի պետական քոլեջում՝ 0%, 0%, 30%, Երևանի հ.4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 17%, 17%, 22%, գրանցելով «Ցածր արդյունք», Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 6%, 15%, 13%, Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 6%, 1%, 4%, Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ 14%, 0%, 8%, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ 14%, 0%, 8%, ընդհանուր առմամբ չի նվազել՝ գրանցելով՝ «Միջին արդյունք»:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆԹԻՎՆ ԸՍՏ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ԳԾԱՊԱՏԿԵՐ 6



Գծապատկեր 6-ում առկա տվյալները տոկոսային արտահայտությամբ հաշվարկված են վերջին երեք ուստարիների ավարտական կուրսի ուսանողների ընդհանուր թվի նկատմամբ:

20. □Տնօրեն□ հավելվածում ներառվել են նաև այլ բնութագրիչներ (հարցադրումներ), որոնց համար նախատեսվել են՝ □Այո□, □Մասամբ□ և □Ոչ□ պատասխանների տարբերակներ: Ըստ բնութագրիչների՝

- Հաստատության՝ տվյալ մասնագիտության նյութատեխնիկական բազան վերջին 3 տարիներին Երևանի ինֆորմատիկայի և Չարենցավանի պետական քոլեջներում մասամբ է թարմացվել ,իսկ նշված մյուս 5 հաստատություններում՝ թարմացվել է:
- Սոցիալական գործընկերները (գործատուները) հաստատության պետական որակավորման հանձնաժողովի կազմում Երևանի ինֆորմատիկայի և Չարենցավանի պետական քոլեջներում մասամբ են ներգրավվել ,մյուս 5հաստատություններում՝ ներգրավվել են:
- Բացի Կապանի պետական բժշկական քոլեջի, մյուս 6 հաստատություններում ավարտական պրակտիկաներն օգնել են շրջանավարտներին աշխատանքի տեղավորվել տվյալ գործընկերոջ մոտ:

Հավելված 2.□Ուսանողի հարցաթերթ□

Ստուգման ընթացքում 7 հաստատություններում նշված մասնագիտությամբ սովորողներին տրամադրվել են անանուն հարցաթերթիկներ, որտեղ ներառված հարցադրումների պատասխանների օգնությամբ գնահատվել է հաստատության (ներառյալ՝ տվյալ մասնագիտության) կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը: Հարցադրումների համար նախատեսվել են

պատասխանների 4 տարբերակներ՝ □Այո□, □Մասամբ□, □Ոչ□,□Դժվարանում եմ պատասխանել□:

Հարցումներին մասնակցել է 184 ուսանող՝ հետևյալ համամասնությամբ.



Հարցերի պատասխանները խմբավորված են հետևյալ բաժիններով.

1. Սովորողների իրազեկվածությունը հաստատության կանոնակարգերից (կանոնադրություն, ներքին կանոնակարգեր,պայմանագիր):
2. Սովորողի կողմից մասնագիտությունը ընտրելու և մասնագիտությամբ աշխատելու մոտիվացիան:
3. Սովորողների բավարարվածությունը դասավանդումից և պրակտիկայից:
4. Սովորողների բավարարվածությունը ռեսուրսներից, անվտանգությունից և աջակցությունից:

Ընդհանուր առմամբ հարցերի պատասխաններն ունեն հետևյալ պատկերը, որոնք, ըստ վերոնշյալ բաժինների, ներկայացված են տորևբերված գծապատկերներում.

□Ուսանողի հարցաթերթ□-ի արդյունքների վերլուծություն

Բաժին 1. Սովորողների իրազեկվածությունը հաստատության կանոնակարգերից (կանոնադրություն, ներքին կանոնակարգեր, պայմանագիր):

Ըստ ներկայացված տվյալների արդյունքներիէ հաստատություններում սովորողների իրազեկվածության մակարդակը միջինում (բաժնի հարցերի □Այո□ պատասխանների միջին ցուցանիշ) կազմում է՝

- ✓ Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 80,8%,
- ✓ Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 66,7%,
- ✓ Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ 100%,
- ✓ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ 67,3 %,
- ✓ Կապանի պետական բժշկական՝ քոլեջում՝ 82%,
- ✓ Չարենցավանի պետական քոլեջում՝ 97%,
- ✓ Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 87%,



Վերոնշյալը ենթադրում է, որ Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում սովորողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները կամ մեխանիզմները դեռևս վերանայման և բարելավման կարիք ունեն:

Բաժին 2. Սովորողի կողմից մասնագիտությունն ընտրելու և մասնագիտությամբ աշխատելու մոտիվացիան:

Ըստ ներկայացված տվյալների արդյունքների՝ հաստատություններում սովորողների մասնագիտությունը ընտրելու և մասնագիտությամբ աշխատելու մոտիվացիան միջինում (բաժնի հարցերի □Այո □, □Ոչ □, □Մասամբ □ □Դժվարանում եմ պատասխանել □ պատասխանների միջին ցուցանիշ)կազմում է՝

- ✓ Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 95.5 %,0%,27%,0%,

✓ Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 74%,3%,19.3%,0%

✓ Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ 81%,0%,19.3%,0%

✓ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ 64%,6%, 29%,1%,

✓ Կապանի պետական բժշկական՝ քոլեջում՝ 71%, 8%, 13%, 8%,

✓ Չարենցավանի պետական քոլեջում՝ 82%, 2%, 16%, 0%

✓ Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 79%, 3%, 15%, 3%,



Ըստ ներկայացված տվյալների արդյունքների (տե՛ս գծապատկեր 9)՝ հաստատություններում մեծ թիվ են կազմում այն ուսանողները, որոնք տվյալ մասնագիտությունն ընտրել են հաստատությունդիմելիս, ինչը վկայում է սովորողների նպատակային

կողմնորոշման մասին: Հնարավորության դեպքում նույն հաստատությունում նույն մասնագիտությունն ընտրելու ,հետագայում մասնագիտությամբ աշխատելու վերաբերյալ սովորողների □Այո□ պատասխանները և բոլոր հաստատություններում մեծ թիվ են կազմում, ինչը դրական է:

Բաժին 3. Սովորողների բավարարվածությունը դասավանդումից և պրակտիկայից:

Ըստ ներկայացված տվյալների արդյունքների հաստատություններում սովորողների բավարարվածությունը դասավանդումից և պրակտիկայից միջինում (բաժնի հարցերի □Այո□, □Ոչ□, □Մասամբ□ □Դժվարանում եմ պատասխանել□ պատասխանների միջին ցուցանիշ)կազմում է՝

- ✓ Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում՝ **99%,0%,1%,0%,**
- ✓ Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ **88%, 0%, 10%, 2%**
- ✓ Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ **99%, 0%, 1%, 0%,**
- ✓ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ **61%,6%, 15%,18%,**
- ✓ Կապանի պետական բժշկական՝ քոլեջում՝ **70%, 5%, 20%, 5%,**
- ✓ Չարենցավանի պետական քոլեջում՝ **81%, 7%, 6%, 6%**
- ✓ Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ **84%, 0%, 13%, 3%**



Ըստ ներկայացված տվյալների արդյունքների (տե՛ս գծապատկեր 10)՝ բոլոր հաստատություններում սովորողների բավարարվածությունը դասավանդումից և պրակտիկայից Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում, Պրովիզոր-նկարիչ Լևոն

Սարգսյանի անվան բժշկական, Կապանի պետական բժշկական, Չարենցավանի պետական քոլեջներում՝ հիմնականում բարձր է, մասնավորապես՝ այս բաժնում ներառված 7 հարցերին տրված պատասխաններում «Այո» տարբերակը՝ նվազագույն և առավելագույն ցուցանիշներով, կազմում է՝

- ✓ Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 96,2%-100%,
- ✓ Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 64%-96%,
- ✓ Պրոֆիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ 92%-100%,
- ✓ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ 49%-73%:
- ✓ Կապանի պետական բժշկական՝ քոլեջում՝ 27%-100%,
- ✓ Չարենցավանի պետական քոլեջում՝ 33%-100%,
- ✓ Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 67%-100%:

Նշված ցուցանիշներում հատկապես մտահոգիչ են □Սովորողների բավարարվածությունը դասավանդումից և պրակտիկայից□ բաժնի հարցերի վերաբերյալ 90%-ից ցածր գրանցված արդյունքները (Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարան, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ):

Բաժին 4. Սովորողների բավարարվածությունը ռեսուրսներից, անվտանգությունից և աջակցությունից:

Ըստ ներկայացված տվյալների արդյունքների (տե՛ս գծապատկեր 11)՝ հաստատություններում սովորողների բավարարվածությունը ռեսուրսներից, անվտանգու-թյունից և հաստատության տրամադրած աջակցությունից տարբեր է, մասնավորապես՝ բաժնում

ներառված հարցերի պատասխանների «Այո» տարբերակը կազմում է՝

- ✓ Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 95,5 %,0%,27%,0%,
- ✓ Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 74%,3%,19,3%,0%
- ✓ Պրոֆիզորներ-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջում՝ 81%,0%,19,3%,0%
- ✓ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում՝ 64%,6%, 29%,1%,
- ✓ Կապանի պետական բժշկական՝ քոլեջում՝ 71%, 8%, 13%, 8%,
- ✓ Չարենցավանի պետական քոլեջում՝ 82%, 2%, 16%, 0%
- ✓ Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում՝ 79%, 3%, 15%, 3%:



Արդյունքները փաստում են, որ հատկապես 50%-ից ցածր ցուցանիշներ ունեցող հաստատությունները վերոնշյալ ուղղություններով ունեն խիստ բարելավման անհրաժեշտություն: Որպես այդպիսին հիմնականում բոլոր հաստատություններում համարվում է հաստատության կողմից տրամադրվող մասնագիտական գրականության խնդիրը, որոշ հաստատություններում՝ անհրաժեշտություն կա նաև հետևել հաստատությունում ուսանողների անվտանգության ապահովմանը, նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

Հավելված 3.«Գործընկեր կազմակերպություններ»

Ստուգման շրջանակներում կրթության որակի գնահատման նպատակով հարցադրումներ են ուղղվել նաև 7 հաստատությունների հետ համագործակցող գործընկեր կազմակերպություններին: Պրոֆիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջը, ինչպես նշվել է, սովորողների պրակտիկան քոլեջի լաբորատորիայում կազմակերպելու հիմքով չունի գործընկեր կազմակերպություններ:Հարցադրումները վերաբերել են վերջին երեք տարիների համագործակցության վերաբերյալ տեղեկատվությանը, որի արդյունքում գնահատվել է հաստատություններում նշված մասնագիտությամբ սովորողների գործնական կարողությունները և գործընկեր կազմակերպությունների հետ հաստատության գործունեության արդյունավետությունը: Հարցումներին մասնակցել են 52 գործընկեր կազմակերպություններ, որոնց համամասնությունը ներկայացված է գծապատկեր 12-ում:

Հարցաթերթը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. Ընդհանուր տեղեկություններ գործընկեր կազմակերպության վերաբերյալ:
2. Գործընկեր կազմակերպության գնահատականը հաստատության ուսանողների կրթության որակի և բարելավման ուղղված միջոցառումների վերաբերյալ:
3. Գործընկերոջ սպասումները, առաջարկները հաստատության հետհամագործակցելու առումով:

Հարցման արդյունքների ուսումնասիրությունից պարզվել է.

Ընդհանուր տեղեկություններ գործընկեր կազմակերպության վերաբերյալ

Գյումրու հ. 1 արհեստագործական պետական, Երևանի հհ. 4, 6 արհեստագործական պետական ուսումնարանների, Կապանի պետական բժշկական, քոլեջների հարցումներին մասնակից բոլոր գործընկեր կազմակերպությունները մասնավոր են, Չարենցավանի պետական քոլեջի 3 գործընկեր կազմակերպություններից 2-ը մասնավոր են, 1-ը պետական, որոնց գործունեության հիմնական ոլորտներն են՝ առևտրային, արտադրական և ծառայողական, հանրային-համայնքային և այլն, իսկ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի 16 գործընկեր կազմակերպություններում ներգրավված են պետական, մասնավոր, հասարարական կազմակերպություններ, որոնց գործունեության հիմնական ոլորտներն են՝ կրթական, առևտրային, արտադրական, հեռահաղորդակցության և այլ: Ստորև ներկայացված են նշված կազմակերպությունների թիվն՝ ըստ գործունեության սեկտորի.



Ինչպես արտահայտված է գծապատկերում, □Խոհարարական գործ□ մասնագիտությամբ գործընկեր կազմակերպությունները հիմնականում մասնավոր սեկտորից են, իսկ Երևանի ինֆորմատիկայի և Չարենցավանի պետական քոլեջներն ունեն ավելի լայն հնարավորություն տարբեր սեկտորների գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության:

Գործընկեր կազմակերպության գնահատականը հաստատության ուսանողների կրթության որակի և բարելավմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ

Այս բաժնի հարցերը վերաբերում են պրակտիկայի ընթացքում սովորողների կարողություններին և հմտություններին, պրակտիկայի արդյունավետությանը և դրանց բարձրացմանն ուղղված միջոցառումներին: Ըստ հարցաթերթում լրացված արդյունքների՝

- Վերջին 3 տարիներին հաստատություններից գործընկեր կազմակերպությունում անցկացվող պրակտիկայում ներգրավված են եղել 533 ուսանող հետևյալ համամասնությամբ.



• Սովորողների տեսական և գործնական գիտելիքներն ու հմտությունները գործընկեր կազմակերպությունների □Գերազանց□, □Լավ□, □Բավարար□, □Վատ□, □Դժվարանում եմ պատասխանել □ գնահատման սանդղակով ունեն հետևյալ պատկերը.



Գծապատկերում արտահայտված ցուցանիշները հիմնականում □Գերազանց□ և □Լավ□ են Երևանի հհ.4, 6 արհեստագործական պետական ուսումնարաններում և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում, սակայն վերջինս գրանցել է նաև «Բավարար» ցուցանիշը: Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանում սովորողների տեսական և գործնական գիտելիքների 90% բավարար ցուցանիշը

մտահոգիչ է տվյալ մասնագիտությամբ որակյալ կադրեր պատաստելու համար:

Ըստ «Գործընկեր կազմակերպությունների՝ ուսանողների կրթության որակի գնահատման հարցաթերթ»-ի՝

- Գործընկեր կազմակերպությունների հավաստմամբ պրակտիկաներն օգնել են ուսանողներին ձեռք բերել գործնական կարողություններ և հմտություններ նշված բոլոր մասնագիտությունների դեպքում, բացառությամբ Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանի մեկ գործընկեր կազմակերպության, որը նշել է □Մասամբ□ տարբերակը:
- □Հնարավորության դեպքում հաստատության շրջանավարտներին կընդունեի՞ք աշխատանքի Ձեր կազմակերպությունում□ հարցին մասնակից կազմակերպությունները նշել են՝ □Այո□տարբերակը, բացառությամբ Երևանի հ.6արհեստագործական պետական ուսումնարանի մեկ գործընկեր կազմակերպության, որը նշել է □Մասամբ□տարբերակը:
- Նշված տվյալների համաձայն՝ վերջին 3տարիներին հաստատության շրջանավարտներից տվյալ կազմակերպություններում աշխատանքի են ընդունվել՝ Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարանից՝ 42 շրջանավարտ, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջից՝ 36, Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանից՝ 1 շրջանավարտ, Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանից,Կապանի պետական բժշկական, Չարենցավանի պետական քոլեջներից չեն ընդունվել:

- □Ինչպիսի՞ գիտելիքներ և հմտություններ կառաջարկեք, որոնց ներառումը տվյալ մասնագիտության կրթական ծրագրում կբարելավի հաստատության ուսանողների կրթության որակը □բաց հարցին պատասխանել է միայն Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը՝ հադես գալով հետևյալ առաջարկներով.

✓ Ընդլայնել ծրագրավորման լեզուների սանդղակը, 2ե2տը դնել նոր տեխնոլոգիայի պահանջներին, մեծացնել համագործակցությունը մասնագիտական գործընկերների հետ, որը հնարավորություն կտա քայլել ժամանակին համահունչ:

✓ Ծանոթանալ ժամանակակից տեխնոլոգիաներին ծրագրավորման բնագավառում, մասնավորապես՝ նեյրոնային ցանցերին:

✓ Ճկունություն, մաթեմատիկական մտածողություն, անգլերեն և ռուսաց լեզուների տիրապետում:

✓ Հիմնարար գիտելիքներ մաթեմատիկայից և ծրագրավորման լեզուներից: Միայն HTML/CSS բազային գիտելիքը բավարար հմտություն չէ ընկերությունների նախագծերին միանալու համար:

✓ Կրթության որակը բարելավելու համար առաջարկում ենք ներկառուսումնական ծրագրին լինել հնարավորինս հետևողական, որպեսզի ուսանողները փորձաշրջան անցնելիս ունենան բազային գիտելիքներ, որն էլ կհեշտացնի հետագա համագործակցությունը:

✓ Մասնագիտական պրակտիկ գիտելիքներ, պրակտիկան սկսել ավելի ցածր կուրսերում

✓ Python Django, Node js, Php laravel...

✓ Ցանկալի է դասավանդվող առարկաներում ավելացնել պրակտիկ առաջադրանքների ծավալը, որոնք

անմիջապես առնչվում են աշխատաշուկայի պահանջներին:

- □Ի՞նչ կառաջարկեիք հաստատությանը աշխատաշուկայում պահանջված և մրցունակ մասնագետ թողարկելու համար□ հարցին Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ» և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությունների վերաբերյալ առկա են կազմակերպությունների առաջարկները, որոնք ներկայացված են աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3

Գործընկեր կազմակերպությունների կողմից արված առաջարկներ	
Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան» «Խոհարարական գործ»	❖ **Առաջարկում եմ սովորողների մոտ սերմանել սեր իրենց մասնագիտական աշխատանքի մեջ:** ❖ **Ուսումնական հաստատությունում ավելի մեծ ուշադրություն դարձնել արտադրական ուսուցման դասերին ուսանողների գործնական հմտությունների խորացմանը:** ❖ **Ապահովել ուսանողների մոտ ավելի խորը գործնական հմտություններ:** ❖ **Ցանկալի է, որ ուսանողի մոտ սերմանվի աշխատասիրությունը և պատասխանատվությունը:**
Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարան» «Խոհարարական գործ»	❖ **Ավելի շատ գործնական հմտություններ ունենալ:** ❖ **ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառել:** ❖ **Ոլորտի մասնագետների հետ հաճախակի հանդիպում կազմակերպել:**

	❖ Կրթական ծրագրում գործնական պարապմունքների ժամերն ավելացնել: ❖ Նյութատեխնիկական բազան ընդլայնել: ❖ Մրցակցության մեծացման համար ուսումնարանում տվյալ մասնագիտության համար հատկացված տեղերն ավելացնել:
Երևանի հ. 6 արհեստագործական պետական ուսումնարան» «Խոհարարական գործ»	❖ Ավելի շատ գործնական հմտություններ ունենալ:
Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»	❖ Զարգացնել ուսանողների վերլուծական միտքը, դաստիարակել աշխատասիրություն և ձգտում, բարձր գիտելիքների ապահովում: ❖ Անցնել միայն ժամանակակից տեխնոլոգիաներին: ❖ Դասավանդել պրակտիկ գիտելիքներ: ❖ ՀՀ աշխատանքային արդի ծրագրերի տիրապետում: ❖ Կազմակերպությունը առաջարկում է համագործակցություն ունենալ տարբեր կազմակերպությունների հետ, որտեղ ուսանողները յուրաքանչյուր ուսումնական կիսամյակից հետո կունենան փորձաշրջան տվյալ բնագավառում՝ իրենց համապատասխանությունը ստուգելու համար: ❖ Դասախոսական անձնակազմին նույնպես ուղարկել պրակտիկաների համապատասխան ոլորտների ընկերություններ: ❖ Կրթել ազնիվ,պարտաճանաչ,ճկուն ու արդարամիտ ուսանողներ: ❖ Առավել սերտ համագործակցություն գործատուների հետ,բացի պրակտիկայից այլ նախագծերի իրականացում: ❖ Համագործակցել Start-up-երի հետ, ուսանողներին ներգրավել նախագծերում: ❖ Ուսանողներին սովորեցնել արագ և ճիշտ կողմնորոշվել, ստեղծագործ միտք ունենալ, իր մասնագիտության միջազգային

	փորձին տեղյակ լինել, տիրապետել լեզուներին:
Չարենցավանի պետական քոլեջ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»	❖ Ավելի շատ գործնական հմտություններ ունենալու, արդյունավետ պրակտիկա կազմակերպել: ❖ Ոլորտի մասնագետների հետ հաճախակի հանդիպումներ կազմակերպելու: ❖ Կրթական ծրագրում գործնական պարապմունքների ժամերն ավելացնել: ❖ Աշխատաշուկային ծանոթացնող դասընթացներ պարբերաբար կազմակերպել: ❖ Այլ ուսումնական հաստատությունների հետ փորձի փոխանակում: ❖ «Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հասանելիություն, դրանց կիրառման հնարավորություն:
Կապանի պետական բժշկական քոլեջ» «Ատամնատեխնիկական գործ»	❖ «Ավելի շատ գործնական հմտություններ ունենալու», ❖ «Ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառելու», ❖ «Ոլորտի մասնագետների հետ հաճախակի հանդիպում կազմակերպելու», ❖ «Կրթական ծրագրում գործնական պարապմունքների ժամերն ավելացնելու»

Գործընկերոջ սպասումները, առաջարկները հաստատության հետ համագործակցելու առումով

Հարցաթերթի այս բաժնում ներառված են հարցեր կազմակերպության և տվյալ հաստատության ներկա և շարունակական համագործակցության և արդյունավետության վերաբերյալ: Ըստ հարցաթերթում լրացված արդյունքների՝

•□Արդյունավե՞տ է Ձեր կազմակերպության համագործակցությունը տվյալ հաստատության հետ□ հարցին բոլոր հաստատությունների հետ համագործակցող կազմակերպությունների դիրքորոշումը միանշանակ դրական է, բացի Գյումրու

հ. 1 արհեստագործական պետական ուսումնարանից, որի գործընկեր կազմակերպությունների 30%-ը արդյունավետ չի համարում իր համագործակցությունը հաստատության հետ:

•Գործընկեր կազմակերպությունները հիմնականում ցանկանում են շարունակել համագործակցությունը հաստատությունների հետ, ընդ որում Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի որոշ գործընկերներ հանդես են եկել լրացուցիչ առաջարկներով, որը վերաբերում է կրթական չափորոշիչների և ծրագրերի վերանայմանը, հաստատության ուսանողներին մասնագիտական աջակցություն տրամադրելու համար հանդիպումների հաճախակի կազմակերպմանը:

Ընդհանուր առմամբ գործատուների կողմից տրված գնահատականը իրենց կազմակերպությունում պրակտիկայում ներգրավված սովորողների վերաբերյալ և աշխատանքի ընդունած շրջանավարտերի թիվնունի հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 4).

Աղյուսակ 4

Գործատուների կողմից տրված գնահատականը իրենց կազմակերպությունում պրակտիկայում ներգրավված սովորողների վերաբերյալ և աշխատանքի ընդունած շրջանավարտերի թիվը (%)			
	Կազմակերպությունում անցկացվող պրակտիկայում ներգրավված ուսանողների թիվը 3 տարվա ընթացքում	Գործատուների գնահատականը սովորողների տեսական և գործնական կարողությունների և հմտությունների վերաբերյալ	Կազմակերպության կողմից աշխատանքի ընդունած շրջանավարտների թիվն՝ ըստ հաստատությունների
Գյումրու հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան	38	Գերազանց 0 Լավ 1 Բավարար 8	15 (39%)
Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարան	236	Գերազանց 3 Լավ 7 Բավարար 0	44 (18%)
Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ	145	Գերազանց 8 Լավ 5 Բավարար 3	36 (25%)
Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարան	35	Գերազանց 1 Լավ 6 Բավարար 3	1(3%)
Չարենցավանի պետական քոլեջ	66	Գերազանց Լավ 3 Բավարար	0
Կապանի պետական բժշկական պետական քոլեջ	13	Գերազանց Լավ 3 Բավարար	0

Ինչպես երևում է աղյուսակից, 3 տարվա ընթացքում հաստատությունների հետ համագործակցող կազմակերպությունների կողմից աշխատանքի ընդունված՝ հաստատությունների շրջանավարտների ցուցանիշները դրական են, բացի Կապանի պետական բժշկական և Չարենցավանի պետական քոլեջներից,

որոնք գրանցել են 0, իսկ Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանը՝ 1(3%) ցածր արդյունք, ինչը մտահոգիչ է:

«Սովորողների բավարարվածությունը պրակտիկայի արդյունավետությունից» հարցման արդյունքներն ունեն հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 5).

Աղյուսակ 5

Սովորողների բավարարվածությանը պրակտիկայի արդյունավետությունից, նյութատեխնիկական բազայից			
Հաստատությունը	**Հարցմանը մասնակից սովորողների քանակ**	**Ուսանողների բավարարվածությունը պրակտիկաների արդյունավետությունից**	**Սովորողների բավարարվածությունը նյութատեխնիկական բազայից**
Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանում	**26**	**100%**	**100%-այո**
Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարանում	**30**	**93,3%**	**50%-այո**
Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ	**51**	**49%**	**49%-այո**
Պրոֆիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ	**12**	**100%**	**83%-այո**
Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանում	**30**	**84%**	**45%-մասամբ**
Չարենցավանի պետական քոլեջ	**24**	**84%**	**45%-մասամբ**
Կապանի պետական բժշկական	**11**	**70%**	**45%-մասամբ**

պետական քոլեջ			

Ինչպես երևում է աղյուսակից, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի՝ հարցմանը մասնակից ուսանողների միայն 49%-ն է պատասխանել, որ պրակտիկաներն արդյունավետեն, թեև գործատուների գնահատման արդյունքները, ընդհանուր առմամբ, բարձր էին, իսկ պրակտիկաները հիմնականում օգնել են ուսանողներին ձեռք բերել գործնական գիտելիքներ ու հմտություններ:

Հետաքրքրական է նաև հաստատությունների տնօրենների և ուսանողների բավարարվածության ցուցանիշները հաստատության տվյալ մասնագիտության նյութատեխնիկական բազայից: Չնայած տնօրենները հիմնականում փաստել են, որ վերջին 3 տարիներին հաստատություններում բարելավվել է նյութատեխնիկական բազան, միայն Ինֆորմատիկայի պետական քոլեջի տնօրենի հավաստմամբ՝ մասամբ է բարելավվել, մինչդեռ ուսանողների պատասխանները տալիս են հետևյալ արդյունքը (տե՛ս աղյուսակ 5).

Ինչպես երևում է աղյուսակից, Երևանի հ.հ. 4, 6 արհեստագործական պետական ուսումնարաններում, Կապանի պետական բժշկական, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջներում սովորողների բավարարվածությունը, ընդհանուր առմամբ, ցածր է: Նույնը վերաբերում է սովորողների բավարարվածությանը հաստատությունների կողմից տրամադրված մասնագիտական գրականությունից (տե՛ս աղյուսակ 6).

Հաստատություն	**Հարցմանը մասնակցած սովորողների թիվը**	**Ուսանողների բավարարվածությունը մասնագիտական գրականությունից**

Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան	26	73,1%
Երևանի հ.6 արհեստագործական պետական ուսումնարան	30	43,4 %%
Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ	51	37,3 %
Պրոֆիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ	12	25 %
Երևանի հ. 4 արհեստագործական պետական ուսումնարան	30	37%
Չարենցավանի պետական քոլեջ	24	62,5 %
Կապանի պետական բժշկական պետական քոլեջ	11	72,7 %

Աղյուսակ 6

Արդյունքները վկայում են, որ հաստատություններում մասնագիտական գրականության խնդիրը հրատապ լուծում է պահանջում:

Ամփոփում

Նախնական և միջին մասնագիտական 7 հաստատություններում մասնագիտության կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքներն են՝

– Ուսանողների առաջադիմության քանակական դինամիկայի առկա միջին արդյունքներն ավարտական կուրսերում,պրակտիկայի ընթացքում, վկայում են հաստատություններում կրթության բարելավման անհրաժեշտության մասին, միաժամանակ՝ մասնագիտական առարկաների գվերապատրաստված մանկավարժների տոկոսային թվի՝ ցածր և միջին արդյունքների առկայությունը կարող է խոչընդոտել

ուսանողների առաջադիմության էլ ավելի բարձրացմանը:

– Սոցիալական գործընկերների կողմից աշխատանքի ընդունված և իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների՝ հիմնականում միջին և ցածր արդյունքները, գործընկերների գնահատականներն ու առաջարկները վկայում են այն մասին, որ սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները վերանայման կարիք ունեն:

– Որոշ հաստատություններում ապահովված է սովորողների անվտանգությունը, ծառայությունների տրամադրումը,ռեսուրսների հասանելիությունը, սակայն առկա են մասնագիտական գրականության, SS բազայի թարմացման անհրաժեշտություն:

– Սովորողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները, մեխանիզմները վերանայման և բարելավման կարիք ունեն:

– Դասավանդումից և պրակտիկայից սովորողների բավարարվածության միջին արդյունքները վկայում են հաստատությունում որակյալ մասնագետպատրաստելուներուժի մասին:

– Սոցալական գործընկերների հետ հաստատությունների համագործակցության մեխանիզմները վերանայման և լավարկման կարիք ունեն:

Առաջարկություններ

Ելնելով գնահատման արդյունքներից և հաշվի առնելով սոցիալական գործընկերների առաջարկները՝ հաստատություններում կրթության

որակի բարելավման համար հաստատությունների **տնօրեններին** առաջարկվում է.

1. ուսանողների գործնական գիտելիքների խորացման, դրանով իսկ կրթության որակի բարելավման նպատակով վերհանել առկախնդիրները և համապատասխան առաջարկություններ ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը,

2. նպաստել հաստատության կանոնակարգերի վերաբերյալ սովորողների իրազեկվածության բարձրացմանը,

3. սոցիալական գործընկերներին ներգրավել նաև կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման գործընթացներում՝ առաջարկություններ ներկայացնելու նպատակով,

4. ընդլայնել սոցալական գործընկերների հետ համագործակցության դաշտը և ներդնել համագործակցության արդյունավետության բարձրացման մեխանիզմներ,

5. հաստատություններում ապահովել մասնագիտական գրականության բավարար առկայություն,

6. թարմացնել նյութատեխնիկական,այդթվում՝ նաև ՏՏ բազան,

7. միջոցներ ձեռնարկել մանկավարժների վերապատրաստման,մասնագիտական աճի ու զարգացման համար,

8. Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջին լրացուցիչ առաջարկվում է «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության շրջանակում հաշվի առնել նաև գործատուների առաջարկները, որոնք ներկայացված են շարադրանքում:

ՌԳՍՊՎԳ վարչություն